# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՍՄՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 79 | Աստրադեզ Բիօքսի | Աստրադեզ Բիօքսի | Աստրադեզ Բիօքսի | ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ | «Աստրադեզ Բիօքսի» ախտահանիչ միջոցն իրենից ներկայացնում է խտանյութ՝ անգույնից մինչև բաց դեղին գույնի, թափանցիկ, թույլ, յուրահատուկ հոտով հեղուկ: Որպես ազդող նյութ՝ պարունակում է 20,0±0,5% ջրածնի պերօքսիդ, 3,0±0,5% պոլիհեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդ (ՊՀՄԳ), 3,0±0,5% ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (ՉԱՄ), 0,10±0,01% պոլիհեքսմեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ (ՊՀՄԲ), ֆունկցիոնալ, կայունացնող և հակակոռոզիոն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հավելումներ: Միջոցի 1%-ոց ջրային լուծույթի ջրածնային իոնների խտության ցուցանիշը pH = 4,5±1,5: Միջոցի պիտանելիության ժամկետը՝ պահպանման պայմաններին հետևելով և արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ 3 տարի է :Միջոցի լուծույթներն օժտված են մանրէասպան ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչները՝ թեստավորված Mycobacterium terrae DSM 43227-ի թեստ-շտամի կուլտուրայի վրա, լեգիոնելոզի, հատուկ վտանգավոր վարակների՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և սիբիրյան խոցի (սպորասպան ազդեցություն) հարուցիչների), վիրուսասպան հատկություններով (արտաընդերային հեպատիտների, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի, ադենովիրուսի, էնտերովիրուսի, ռոտավիրուսի, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, պարագրիպի, հերպեսի, թռչնի A/H5N1 և խոզի H1N1 գրիպի, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | արտաընդերային և ընդերային հեպատիտի, Կոքսակի, ECHO, Էբոլայի, Զիկայի, Մարբուրգի և այլ հեմոռագիկ տենդերի վիրուսների նկատմամբ և այլն), սնկասպան հատկություններով (այդ թվում կանդիդոզի և տրիխոֆիտիայի հարուցիչների, բորբոսասնկերի նկատմամբ՝ թեստավորված Aspergillus niger թեստ-շտամի կուլտուրայի վրա), սպորասպան հատկություններով և մանրէազերծիչ ազդեցությամբ: Կիրառվում է ցանկացած տեսակի մակերեսների, գույքի, սպասքի, սպիտակեղենի, օդի և այլն, ախտահանման և մաքրման համար։ Ինչպես նաև, բժշկական գործիքների, այդ թվում՝ ջերմաանկայունների լվացման, ախտահանման և մանրէազերծման համար; էնդոսկոպերի և նրանց հետ օգտագործվող գործիքների լվացման, բարձր մակարդակի ախտահանման համար: Ունի ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ: : Կտրամադրվեն լուծույթի խտությունը ստուգող շերտաձողիկներ։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍՄՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 79 | Астрадез Биокси | Астрадез Биокси | Астрадез Биокси | ГИГИЕНА-МЕД | |